Արձանագրություն N 2

Երևանի քաղաքապետարանի սոցիալական աջակցության Արաբկիրի տարածքային բաժինը Ռաֆֆու անվան թիվ 36 դպրոցի տարածք տեղափոխելու նպատակով իրականացվող հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման «ԵՔ-ՊԸԱՇՁԲ-16/13» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք.Երևան 28.10.2016թ

Ժամը՝ 10:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միսկարյան/ԳԱՊ/

Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մուկուչյան /գնահատող/, Է. Ղազարյան / գնահատող/, Ս. Մաքսապետյան / բացող / Ն. Պողոսյան/բացող/

1. Տեղեկություններ «ԵՔ-ՊԸԱՇՁԲ-16/13» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ա. Միսկարյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2016 թվականի հոկտեմբերի 28-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ՊԸԱՇՁԲ-16/13» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Միսկարյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	«ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ
2	«Արաբկիր նախագիծ»* ՓԲԸ
3	«Էմ Ջի դիզայն» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ա. Միսկարյան)

3.1 Պարզեցված ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

h/h	Երևանի քաղաքապետարանի սոցիալական աջակցության Արաբկիրի տարածքային բաժինը Ռաֆֆու անվան թիվ 36 դպրոցի տարածք տեղափոխելու նպատակով իրականացվող հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ					
	Մասնակցի անվանումը	Առաջարկած գինը				
		Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր	Նախահաշվային արժեքը

1	«ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ	129 600	14 400	-	144 000	231 000
2	«Արաբկիր նախագիծ» ՓԲԸ	135 000	15 000	-	150 000	
3	«Էմ Ջի դիզայն» ՍՊԸ*	440 000	44 000	-	484 000	

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

3.3 *«Էմ Ջի դիզայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է գնման առարկայի նախահաշվային արժեքը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա. Միսկարյան)

4.1 «ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ-ի և «Էմ Ջի դիզայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4.2 «Արաբկիր նախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև ներկայացված տուժանքի մասին համաձայնության մեջ բացակայում է տնօրենի անձնագրի տվյալները, լրացված է վճարման պահանջագրի համարը և ամիս ամսաթիվը, որը լրացվում է պատվիրատուի կողմից, լրացված չէ «Արժույթը» տողը:

4.3 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ	Բավարար
«Արաբկիր նախագիծ» ՓԲԸ	Անբավարար
«Էմ Ջի դիզայն» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Պարզեցված ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի մասին

(Ա. Միսկարյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ՊԸԱՇՁԲ-16/13» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

6. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ա. Միսկարյան)

6.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի

առկայության վերաբերյալ 31.10.2016թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

6.2 31.10.2016թ ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

7. Պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Միսկարյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ուղարկված եզրակացության և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման փոստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան 04.11.2016թ. ժամը 11:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Միսկարյան

Անդամներ՝ ---------- Ն. Մուկուչյան

---------- Ս. Մաքսապետյան

---------- Է. Ղազարյան

---------- Ն. Պողոսյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան